ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ ՔՆՆՈՂ ԱՆՁ

ք. Երևան 06.08.2019թ.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

ՀՀ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԲՈՂՈՔՆԵՐ

ՔՆՆՈՂ ԱՆՁԻ

թիվ ՍՑ-LO-2019/113

Նախագահությամբ՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձ Լ. Օհանյանի

Քարտուղարությամբ՝ Լ.Անանիկյանի

Պատվիրատու՝ Երևանի քաղաքապետարան

Մասնակից՝ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ

Գնման ընթացակարգի ծածկագիրը և առարկան՝

«ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ, տնտեսական ապրանքների ձեռքբերում

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը (այսուհետ՝ նաև Բողոքներ քննող անձ)՝ ուսումնասիրելով Հայաստանի Հանրապետության ֆինանսների նախարարության կողմից 08.07.2019թ. թիվ 26/26-1/11320-2019 գրությամբ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին (այսուհետ՝ նաև Մասնակից) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգով ներկայացված հիմքերը,

Պ Ա Ր Զ Ե Ց

1. **<u>Գործի նախապատմությունը.</u>**

ՀՀ ֆինանսների նախարարությունը, Երևանի քաղաքապետարանի 01.07.2019թ.-ի թիվ 01/61/12588 գրության հիման վրա, 08.07.2019թ. «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնել է ընթացակարգ՝ Բողոքներ քննող անձին ներկայացնելով համապատասխան հիմքեր:

Բողոքներ քննող անձի 08.07.2019թ.-ի որոշմամբ գործը ընդունվել է վարույթ և 18.07.2019թ.-ին նշանակվել է նիստ:

Գործի քննությունն ավարտվել է 18.07.2019թ.-ին և Բողոքներ քննող անձի որոշման հրապարակման օր է նշանակվել 06.08.2019թ.-ին:

2. <u>Երևանի քաղաքապետարանի ներկայացրած փաստերը և դիրքորոշումը</u>.

Երևանի քաղաքապետարանը 01.07.2019թ.-ի թիվ 01/61/12588 գրությամբ դիմել է ՀՀ ֆինանսների նախարարությանը՝ հայտնելով հետևյալը.

««Երևանի քաղաքապետարանի կողմից կազմակերպված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ--19/117» ծածկագրով գնման Ընթացակարգի գնահատող հանձնաժողովի 11.06.2019 թվականի որոշմամբ 1,6,8-12,14,22-24-րդ չափաբաժինների մասով առաջին տեղ զբաղեցրած մասնակից է ճանաչվել «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն:

Երևանի քաղաքապետարանը, ղեկավարվելով ՀՀ կառավարության 04.05.2017 թվականի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 43-րդ կետի 3-րդ ենթակետի դրույթով, գնման ընթացակարգի առաջին տեղ զբաղեցրած մասնակցի հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ 12.06.2019 թվականին հարցում է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտե:

ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից սահմանված ժամկետում ներկայացված տեղեկատվության համաձայն՝ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ունի ՀՀ պետական բյուջեի նկատմամբ ժամկետանց հարկային պարտավորություններ 12,000 /տասներկու հազար/ ՀՀ դրամի չափով, որը գերազանցում է բոլոր չափաբաժինների մասով մասնակցի կողմից ներկայացրած գնային առաջարկի մեկ տոկոսը:

Վերոգրյալով պայմանավորված՝ ղեկավարվելով «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ ենթակետով, առաջարկում եմ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ի նկատմամբ կիրառել «Գնումների մասին» օրենքի 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով սահմանված դրույթը:»:

3. <u>«Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը.</u>

Բողոքներ քննող անձը 09.07.2019թ. գրությամբ դիմել է «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին՝ հնարավորություն տալով ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2019թ. թիվ 26/26-1/11320-2019 գրությամբ նախաձեռնված ընթացակարգի վերաբերյալ ներկայացնել Մասնակցի գրավոր կարծիքը:

Մասնակիցը ստանալով կարծիք հայտնելու վերաբերյալ գրությունը, ինչպես նաև ծանուցված լինելով նիստերի տեղի, օրվա և ժամի մասին, չի ներկայացրել գրավոր դիրքորոշում, առարկություններ կամ կարծիք:

Ներկայանալով նիստին բանավոր կերպով հայտնել է, որ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ ժամկետանց հարկային պարտավորություններ չի ունեցել, միաժամանակ խնդրել է տալ հնարավորություն հարկային պարտավորություններ չունենալու վերաբերյալ ապացույցներ ներկայացնելու համար:

«Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն էլեկտրոնայի փոստի միջոցով Բողոքներ քննող անձին է ներկայացրել ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրված տեղեկանքը, որի համաձայն՝ Մասնակիցը 2019թ.-ի հունիսի 30-ի և հուլիսի 3-ի դրությամբ չունի ժամկետանց հարկային որևէ պարտավորություն:

4. <u>ՍՑ-LO-2019/113 ընթացակարգի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը.</u>

Սույն գործի փաստերի համաձայն՝

Երևանի քաղաքապետարանի կողմից «տնտեսական ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարվել է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգ (այսուհետ նաև՝ Ընթացակարգ):

Ընթացակարգի մասնակցելու նպատակով 03.06.2019թ.-ին հայտ է ներկայացրել նաև «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն:

Մասնակիցը «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով գնանշման հարցման հրավերով նախատեսված մասնակցության իրավունքի պահանջներին համապատասխանելու մասին ներկայացրած հայտարարությամբ հայտարարել և հավաստել է, որ բավարարում է «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով գնանշման հարցման հրավերով սահմանված մասնակցության իրավունքի պահանջներին:

Գնահատող հանձնաժողովի 11.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 3 արձանագրության համաձայն՝ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն ընթացակարգի 1-րդ, 6-րդ, 8-12-րդ, 14-րդ, 22-24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 12.06.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (03.06.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 12,000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

Գնահատող հանձնաժողովի 18.06.2019թ.-ին կայացած նիստի թիվ 4 արձանագրության համաձայն՝ հիմք ընդունելով ՀՀ պետական եկամուտների կոմիտեի կողմից տրամադրված տեղեկատվությունը, որոշում է կայացվել մերժել «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ի հայտը:

5. <u>Բողոքներ քննող անձի հիմնավորումները և եզրահանգումը</u>.

Բողոքներ քննող անձը լրիվ, օբյեկտիվ և բազմակողմանի հետազոտելով և գնահատելով սույն գործում առկա ապացույցները, և համադրելով դրանք գործով պարզված փաստական հանգամանքների հետ, հանգում է այն եզրակցության, որ ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2019թ. թիվ 26/26-1/11320-2019 գրությամբ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը ենթակա է բավարարման, հետևյալ պատճառաբանությամբ.

Այսպես՝

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 6-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի համաձայն՝ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը,

բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Նույն մասի 6-րդ կետի «ա» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է պատվիրատուի կողմից պայմանագրի միակողմանի լուծմանը կամ գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ գնումների գործընթացին մասնակցելու իրավունքից զրկված մասնակցի վերաբերյալ ունեցած տեղեկությունների հիման վրա լիազորված մարմինը ընթացակարգ է նախաձեռնում: Տվյալ մասնակցի կարծիքը լսելուց հետո գնումների հետ կապված բողոքներ քննող անձը նույն օրենքի 50-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված ժամկետում որոշում է կայացնում մասնակցին նույն հոդվածով նախատեսված ցուցակում ընդգրկելու վերաբերյալ: Անձը նշված ցուցակում ընդգրկվում է երկու տարի ժամկետով:

ՀՀ կառավարության 04.05.2017թ. N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ Կարգ) 32-րդ կետի 1-ին ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին:

Կարգի 43-րդ կետի 3-րդ ենթակետի համաձայն՝ հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարն էլեկտրոնային փոստի միջոցով Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե (այսուհետ՝ կոմիտե) հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների, ինչպես նաև ինչպես նաև հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի գնահատման համար սահմանված պայմանների առկայության վերաբերյալ՝ ներկայացնելով մասնակցի անվանումը և հարկ վճարողի հաշվառման համարը:

Կարգի 44-րդ կետի համաձայն՝ կոմիտեն նույն կարգի 43-րդ կետի 3-ին ենթակետով նախատեսված հարցումն ստանալու օրվան հաջորդող երկու աշխատանքային օրվա ընթացքում էլեկտրոնային եղանակով պատվիրատուին տրամադրում է հարցման մասին տեղեկատվություն: Եթե կոմիտեի կողմից սահմանված ժամկետից ուշ ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ կամ չի բավարարում հրավերով «ֆինանսական միջոցներ» որակավորման չափանիշի պահանջները, և պայմանագիրը կնքված չէ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Եթե սահմանված ժամկետում տրամադրված տեղեկատվության արդյունքում մասնակցի ներկայացրած հայտարարությունը որակվում է իրականությանը չհամապատասխանող, ապա հայտերի գնահատման նիստում հանձնաժողովի որոշմամբ տվյալ մասնակցի հայտը մերժվում է՝ անկախ մասնակցի կողմից կոմիտեի տրամադրած տեղեկատվությունից տարբերվող տեղեկատվություն ներկայացվելու հանգամանքից:

Կարգի 45-րդ կետի համաձայն՝ Օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետով նախատեսված հիմքերն ի հայտ գալու օրվան հաջորդող հինգ աշխատանքային օրվա ընթացքում պատվիրատուն տվյալ մասնակցի տվյալները՝ համապատասխան հիմքերով, գրավոր ուղարկում է լիազորված մարմին, որը դրանք ստանալուն հաջորդող 5 աշխատանքային օրվա ընթացքում գրավոր տրամադրում է գնումների բողոքարկման խորհրդին: Նույն կարգի 44-րդ կետով սահմանված՝ մասնակցության իրավունք չունենալու հիմքերի առկայության դեպքում սույն կետով նախատեսված տվյալները չեն ներկայացվում լիազորված մարմին, եթե մասնակիցը կամ կոմիտեն լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացրել է մինչև հայտերի գնահատման արդյունքների հաստատման նիստին հաջորդող երրորդ աշխատանքային օրը: Լրացուցիչ տեղեկատվությունը ներկայացվում է ինչպես առաջին տեղը զբաղեցրած մասնակցի կողմից՝ կոմիտեից ստացված գրավոր տեղեկատվությունը գնահատող հանձնաժողովին ներկայացմամբ, այնպես էլ կոմիտեի կողմից տրված նոր տեղեկատվությամբ: Ընդ որում, գնահատող հանձնաժողովի կամ քարտուղարի կողմից կոմիտեին կրկնակի հարցում չի կատարվում:

Վերոնշյալ հոդվածների դրույթների համակարգված վերլուծության արդյունքում, Բողոքներ քննող անձը փաստում է, որ մասնակիցը հայտով ներկայացնում է իր կողմից հաստատված հայտարարություն՝ հրավերով սահմանված մասնակցության իրավունքի և որակավորման չափանիշներին իր համապատասխանության մասին: Հայտերի բացման նիստի ավարտին հաջորդող աշխատանքային օրը հանձնաժողովի քարտուղարը ՀՀ ՊԵԿ հարցում է ներկայացնում առաջին տեղն զբաղեցրած մասնակցի՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ժամկետանց պարտավորությունների առկայության վերաբերյալ: Եթե ՀՀ ՊԵԿ կողմից ներկայացված

տեղեկատվությամբ արձանագրվում է, որ առաջին տեղն զբաղեցրած մասնակիցը հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ, ապա տվյալ մասնակցի հայտը մերժվում է: Տվյալ դեպքում մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ խախտել է պայմանագրով նախատեսված կամ գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Վերոնշյալով պայմանավորված՝ Բողոքներ քննող անձը արձանագրում է, որ գնումների ընթացակարգերին մասնակցելու իրավունք չունեն անձինք, որոնք հայտը ներկայացնելու օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեն իրենց ներկայացրած գնային առաջարկի մինչև մեկ տոկոսը, բայց ոչ ավելի, քան հիսուն հազար Հայաստանի Հանրապետության դրամը գերազանցող ժամկետանց պարտավորություններ: Այս դեպքում մասնակիցը ընդգրկվում է գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ երկու տարի ժամկետով:

Սույն գործի փաստերի հիման վրա, Բողոքներ քննող անձն արձանագրում է, որ.

Երևանի քաղաքապետարանի կողմից «տնտեսական ապրանքների» ձեռքբերման նպատակով հայտարարված «ԵՔ-ԳՀԱՊՁԲ-19/117» ծածկագրով գնանշման հարցման ընթացակարգի արդյունքում «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն 1-րդ, 6-րդ, 8-12-րդ, 14-րդ, 22-24-րդ չափաբաժինների մասով ճանաչվել է առաջին տեղ զբաղեցնող մասնակից:

Ընթացակարգի շրջանակներում գնահատող հանձնաժողովի կողմից 12.06.2019թ. ՀՀ պետական եկամուտների կոմիտե արված հարցման արդյունքում պարզվել է, որ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն հայտը ներկայացնելու (03.06.2019թ.) օրվա դրությամբ հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է ժամկետանց պարտավորություն՝ 12,000 /տասներկու հազար/ ՀՀ դրամ գումարի չափով:

Այսպիսով, վերոհիշյալ փաստական հանգամանքների և իրավական նորմերի լույսի ներքո, դրանց համակարգված վերլուծության արդյունքում Բողոքներ քննող անձը հանգում է այն եզրակացության, որ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն՝ հայտը ներկայացնելու օրվա դրությամբ՝ 03.06.2019թ.-ին, հարկային մարմնի կողմից վերահսկվող եկամուտների գծով ունեցել է օրենքով նախատեսված շեմը գերազանցող ժամկետանց պարտավորություններ:

Ուստի նման պայմաններում «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ն խախտել է գնման գործընթացի շրջանակում ստանձնած պարտավորությունը, որը հանգեցրել է գնման գործընթացին տվյալ մասնակցի հետագա մասնակցության դադարեցմանը:

Ելնելով վերոգրյալից և ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասով, 50-րդ հոդվածի 7-րդ մասի 2-րդ կետով՝ ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձը

Ո Ր Ո Շ Ե Ց

1. ՀՀ ֆինանսների նախարարության կողմից 08.07.2019թ. թիվ 26/26-1/11320-2019 գրությամբ «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու նպատակով նախաձեռնված ընթացակարգը բավարարել:

2. «Վահան Ղարիբյան» Ա/Ձ-ին ընդգրկել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ 2 (երկու) տարի ժամկետով:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն ուժի մեջ է մտնում այն տեղեկագրում հրապարակելուն հաջորդող օրը:

ՀՀ գնումների հետ կապված բողոքներ քննող անձի ընդունած որոշումն իրավապարտադիր է, որը կարող է փոփոխվել կամ վերացվել, այդ թվում՝ մասնակի, միայն դատարանի կողմից:

ՀՀ գնումների հետ կապված
բողոքներ քննող անձ՝ **ԼԵՎՈՆ ՕՀԱՆՅԱՆ**